

ՀՏ 941(479.243)

Պատմություն

**ХІІІ ԴԱՐԻ ԱՐՅԱԽԻ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ԹԱԳԱՎՈՐ ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼ-
ԴՈԼԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
Ստեփան ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼՅԱՆ**

Բանալի բառեր – Հասան-Զալալ-Դոլա, Արցախ, Ներքին Խաչեն, Արցախի իշխանաց իշխան, Գանձասարի նկղենցի, Կաշաղակարերդ, Խոխանաբերդ, Հետու Ա, Աթարելի-Խվանե, Ուղարան:

Key words: Hasan-Jalal-Dola, Artsakh, Lower Khachen, prince of princes of Artsakh, monastery of Gandzasar, Kachaghakaberd, Khokhanaberd, Hetum I, Atabek-Ivane, Ruzaqan.

Ключевые слова: Асан-Джалал-Дола, Арцах, Нижний Хачен, князь князей Арцаха, церковь Гандзасар, Качахакаберт, Хоханаберт, Етум I, Атабек-Иване, Рузакан.

**S. Hasan-Jalalyan
THE ORIGIN AND ACTIVITIES OF THE PRINCE OF PRINCES,
KING OF THE XIII CENTURY OF ARTSAKH HASAN-JALAL-DOLA**

This article presents the origin and activities of the prince of princes of Artsakh, Hasan-Jalal-Dola. In a very short period of time Hasan-Jalal-Dola, due to his management, diplomatic and leadership God-given talents, acquired the status of reigning. Hasan-Jalal-Dola was one of the most prominent statesmen, military and political leaders of the Armenian political reality of the XIII century. His political and diplomatic activity was a unique phenomenon in the history of medieval Armenia. He in fact (*de facto*) and legally (*de jure*) presented himself and was recognized by foreigners as the head of an independent and sovereign state.

If we try to briefly assess the activity of the prince of Artsakh, we can say that if we now have a free and independent Republic of Artsakh, then in this undoubtedly also has an invaluable contribution the king of Artsakh of the XIII century, the prince of princes of the Armenian princely family Aranshakhiks Hasan-Jalal-Dola.

**С. Асан-Джалалян
ПРОИСХОЖДЕНИЕ И ДЕЯТЕЛЬНОСТЬ КНЯЗЯ КНЯЗЕЙ,
КОРОЛЯ АРЦАХА ХІІІ ВЕКА АСАНА-ДЖАЛАЛА-ДОЛЫ**

В данной статье представлены происхождение и деятельность князя князей Арцаха XIII века Асана-Джалала-Долы.

В очень коротком периоде времени Асан-Джалал-Дола, благодаря своему правлению и данные богом дипломатическим и полководческим талантам, приобрел статус царствующего.

Асан-Джалал-Дола был одним из самых выдающихся государственных, военных и политических деятелей армянской политической реальности XIII века. Его политическая и дипломатическая деятельность была уникальным явлением в истории средневековой Армении. Он фактически (*де-факто*) и юридически (*де-юре*) проявил себя и был признан иностранцами как глава независимого и суверенного государства.

Если мы попытаемся кратко оценить деятельность князя князей Арцаха, то можем сказать, что если мы сегодня имеем свободную и независимую Республику Арцах, то в этом несомненно также имеет неоценимый вклад король Арцаха XIII века, князь князей армянского княжеского рода Араншахиков Асан-Джалал-Дола.

Հողվածում ներկայացվում է XIII դարի Արցախի իշխանաց իշխան, թագավոր Հասան-Զալալ-Դոլայի ծագումը և կատարած գործունեությունը:

Ծառ կարծ ժամանակամիջոցում Հասան-Զալալ-Դոլան, շնորհիվ իր կառավարման, դիվանագիտական և զորագրական աստվածառոր տաղանդի, ձեռք է բերում զահենցի կարգավիճակ:

XIII դարի հայ քաղաքական իրականության մեջ Հասան-Զալալ-Դոլան ամենանշանակոր պետական, ուգմական ու քաղաքական գործիչն էր: Նրա քաղաքական-դիվանագիտական գործունեությունը Հայաստանի միջնադարյան պատմության մեջ եղակի երևույթ էր: Նա փաստացի (դե-ֆակտո) և իրավաբանորեն (դե-յուրե) ներկայացնել և օստարների կողմից ճանաչվել է որպես անկախ, ինքնիշխան պետության ղեկավար:

Եթե փորձենք համատու բնութագրել Արցախի իշխանաց իշխանի գործունեությունը, ապա կարող ենք ասել, որ նոր այսօր ունենք ազատ և անկախ Արցախի հանրապետություն, ապա դրանում, անկասկած, իր անուրանալի ներդրումն ունի նաև XIII դարի Արցախի թագավոր, իշխանաց իշխան Առանշահիկ Հասան-Զալալ-Դոլան:

Պատմահայր Խորենացին ցոյց է տվել, որ Արքախ և ՈՒտիքի նախարարական տների ներկայացուցիչները բուն հայկական են՝ սերված Հայկ նահապետի ժառանգներից, մասնավորապես Առանից:

Մինչև ուշ միջնադար Արքախ և ՈՒտիքի իշխանական տների ներկայացուցիչներն իրենց անվանում էին Առանշահիկներ, այսինքն՝ Առան նահապետից սերված իշխաններ: Առանից սկսած՝ նրա ժառանգների իշխանությունը հայոց Արքախ և ՈՒտիք նահանգներում անընդմեջ շարունակվել է երկու հազարամյակ:

Առանշահիկների ծագման մասին Խորենացու մեկնաբանությունը հետագա հայ պատմիչները ևս ընդունել են¹: Այսպես, VII դարի պատմիչ Մովսես Կաղանկատիվացին Հայկ նահապետի ժառանգներից Առանից սերված Առանշահիկներին համարում է Արքախի, ինչպես նաև ՈՒտիքի իշխանական տների նախնիներ²: Նույն տեսակնետին է նաև XIII դարի մեկ այլ պատմիչ՝ Կիրակոս Գանձակեցին³:

Վ դարի վերջում Առանշահիկները Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ ստեղծեցին իրենց թագավորությունը⁴՝ այնուհետև դառնալով թագավորական տոհմ:

Արաբական տիրապետության վերջում Արքախ Առանշահիկները իրենց իշխանությունը տարածում են իմանականում նահանգի նախալնոնային ու լնոնային գավառների վրա, որոնք մեկ ընդհանուր անունով կոչվում էին Խաչեն⁵:

XII դարի սկզբին Խաչենի տարածքի վրա գոյանում են Առանշահիկներից սերված երկու իշխանություններ՝ Ներքին Խաչենի՝ ի դեմս իշխան Վախթանգ Մեծի⁶ և Հաթերքի՝ ի դեմս զերազահ իշխան Հասանի (1142-1182թթ.)⁷: Դարավերջին վերոհիշյալ երկցուղի իշխանությունը ավելանում է երրորդը՝ նոյնպես Առանշահիկներից սերող Վերքին Խաչենի կամ Շարի իշխանությունը⁸, ի դեմս իշխան Հասանի⁹:

XIII դարի սկզբին Մեծ Հայքի Արքախ նահանգի Ներքին Խաչեն գավառի իշխանն էր Հասան Մեծի որդի Վախթանգը, որն աղբյուրներում կոչվել է նաև Վախթանգ-Տանգիկ: «Տանգիկ»-ը, ըստ Երևությին, Վախթանգ անվան երկրորդ վանկն է՝ «Թանգ»-ը կամ «Տանգ»-ը «...փաղաքշական «իկ» մասնիկով հանդերձ: Անվանը փոքրացուցիչ մասնիկ ավելացնելու մեջ կարող էր դեռ խաղացած լինել նաև նոյն ժամանակ Խաչենում զահերեցի իրավունքով իշխող տոհմակից մյուս Վախթանգը, որը Հաթերք գավառի տերն էր և կոչվում էր «գլխաւոր այլոց իշխանաց»¹⁰»¹¹:

Վախթանգ-Տանգիկն ամուսնացել էր ժամանակի հայ-վրացական միացյալ պետության ամիրսպասալար*, իշխանաց իշխան Բագրատունի Սարգիս Զարարյանի¹² և Սահակադուխտ Արծրունու¹³ դուստր Խորիշահի հետ, ով ամիրսպասալարի պաշտոնում Սարգիս Զարարյանին հաջորդած Զարարենի և Վրաց արքունիքի աթաքենկ (թագավորական տան կառավարիչ, թագաժառանգի դաստիարակ)՝¹⁴ Իվանենի քոյրն էր: Վախթանգ-Տանգիկն ու Խորիշահն ունեցել են յոթ

¹Хасан-Ջալալյան С., Рукописные источники по генеалогии князей Хачена, “Вспомогательные исторические дисциплины – источниковедение – методология истории в системе гуманитарного знания”, материалы XX международной научной конференции. Москва, 31 января – 2 февраля 2008г., ч. II, Москва, 2008, с. 648.

²Մովսես Կաղանկատուացոյ Պատմութին Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 14-15:

³Պատմութին Հայոց արաբնալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցի, Թիֆլիս, 1909, էջ 182:

⁴Մովսես Կաղանկատուացոյ Պատմութին Աղուանից աշխարհի, էջ 55-60, 97-103:

⁵ՈՒլուբարյան Բ., Արքախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը. Երևան, 1994, էջ 55:

⁶ՈՒլուբարյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 135-136:

⁷Նույն տեղում, էջ 145:

⁸Նույն տեղում, էջ 152:

⁹Նույն տեղում, էջ 51:

¹⁰Օրծելի Ի., հԱսան Ջալալ, կնքան Խաչենսկի, “Известия Императорской Академии Наук”, серия VI, т. III, N 61, Санкт-Петербург, 1909, с. 408.

¹¹ՈՒլուբարյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 140:

*Ամիրսպասալար – XIII դարում հայ-վրացական միացյալ պետության մեջ քաղաքացիական և ռազմական գործիք գլխավոր կառավարիչ, (տե՛ս Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմությունը, հ. I, Երևան, 1939, էջ 240-241):

¹²Քարխուտարենանց նպիսկոպս Մ., Աղուանից երկիր են դրացիք: Արքախ, Երևան, 1999, էջ 346:

¹³ՈՒլուբարյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 148; Մանանյան Հ., Երևան, հ. III, Երևան, 1977, էջ 137:

¹⁴Աճաղյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ.Ա, Երևան, 1942, էջ 65:

զավակ¹ չորս որդի՝ Հասան-Զալալ-Դոլան, Զարարեն, Իվանեն, Դոլան և նրենք դուստր՝ Մարինոն կամ կամ Մարինան ու ևս նրկու դուստր, որոնց անունները, ցավոք, որևէ ձևով չեն արձանագրվել և մեզ չեն հասնել:

XIII դարի սկզբին՝ 1214թ., Ներքին Խաչենի իշխան Վախթանգ-Տանգիկի վախճանից հետո նրան հաջորդում է իր ավագ որդին՝ Հասան-Զալալ-Դոլան²: Վերջինս իշխել է բավականին նրկար՝ 47 տարի՝ թողնելով չափազանց հարուստ կենսագրություն:

Կիրակոս Գանձակեցին այսպես է բնութագրել նրան. «...սա (Հասան-Զալալ-Դոլան – Ս. Հ-Զ.) քունք որդի էր մեծամեծ իշխանացն Զարարէի և Դանէի, այր բարեպաշտ և ատառածաւէր, հեզ և հանդարտ, ողորմած և աղքատաւէր, ճգնող յաղօթս և ի խնդրուած իբրև զայնս՝ որ յանապատսն կային. զպաշտօն տունչեան և զիշերոյ անխափան կատարէր, ուր և լինէր՝ իբրև զվանօրայսն, և զիշատակ յարութեան Փրկչին յատոր միաշաբաթուց յոտանաւոր տրնութեամբ անցուցանէր անքուն. և էր յոյժ քահանայասէր և ուսումնասէր և ընթերցող աստուածային կտակարանացն»³, այնուհետև պատմիչն ավելացնում է. «...աստվածապաշտ, երկյուղած ու պարկեցած մարդ էր, ազգությամբ հայ»⁴:

Թեև պատմիչ կ. Գանձակեցու խոսքը Հասան-Զալալ-Դոլայի ծագման վերաբերյալ ավելի քան հստակ է և որևէ հիմք չկա կասկածելու նրա խոսքի ծշմարտացիությանը, քանզի դրանք ականատես վկայի խոսքեր են, այնուամենայնիվ մեր օրերում դեռ կան հետազոտողներ, որոնց համար Արցախի իշխանաց իշխանի ազգային պատկանելության հարցը քննության առարկա է⁵:

Կովկասի հարցմբում մասնագիտացած քրիստոնացի գրող և լրագրող Թումաս դե Վալլը, ցանկանալով պարզել Հասան-Զալալ-Դոլայի ծագումը, նամակով դիմել է ԱՄՄ Նյու Յորքի նահանգի Ռուսական քունջի պրոֆեսոր՝ Կովկասի XIII դարի պատմության մասնագետ Ռուսական Հյուսնինին⁶:

2001թ. հունվարի 10-ին պրոֆեսոր Հյուսնինը հանգամանալից պատասխան է ուղարկել Թումաս դե Վալլին⁷: Գիտնականը, հետազոտելով Հասան-Զալալ-Դոլայի ծագումնաբանությունը, հանգել է այն եզրակացության, որ այն բացառապես հայկական է՝ այդ մասին մասնավորապես գրելով. «[Հասան-Զալալի] նախնիները հայտնի են մինչև չորրորդ դարը՝ ներառելով հետևյալ ազնվական տոհմերը. հայրական կողմը՝ (1) Սյունիքի իշխանները (ավելի ուշ՝ թագավորներ): Իր նախնիների հետ ամուսնացած իշխանուինների գծով Հասան-Զալալը սերում է (2) Քագրատունինների տոհմի հայոց թագավորներից (Անի մայրաքաղաքով), (3) Արծրունինների տոհմի Վասպուրականի հայոց թագավորներից (Վան մայրաքաղաքով), (4) Գարդմանի իշխաններից, (5) Պարսկաստանի Սասանյանների տոհմից և (6) Արշակունիններից՝ Ալբանիայի նրկորդ թագավորական տոհմից, որն ինքը (7) հնագույն պարթևական թագավորների ճյուղերից է»⁸:

Այսպիսով՝ անվիճելի է այն փաստը, որ Հասան-Զալալ-Դոլան սերում է հայոց ամենանշանավոր ու հռչակավոր տոհմերից:

Սակայն որտեղից այդ դեպքում նրա օտարահունչ անունը, ի՞նչ են նշանակում այս անձնագիրության նրեր ոչ հայկական անվանումները՝ Հասան, Զալալ և Դոլա:

Այն ժամանակների Արցախում և Հայաստանի մյուս մասերում մեծ տարածում գտած ո՞չ հայկական, նոյնիսկ ո՞չ քրիստոնեական, օտար անունները, ինչպես Հասան, Վախթանգ, Քուրդ և այլն, զարմանալի չեն լինի, եթեն հաշվի առնենք Իրանի, ապա և հատկապես արաբական խալիֆայության, նրանց միջոցով էլ՝ օտար մշակութային միջավայրերի ազդեցությունը հայ ժողովրդի վրա: Այլ խոսքով, պատմական տվյալ ժամանակաշրջանում արաբական լեզուն նդել է բավականին հարգի և ունեցել է մոտավորապես այն արժենքը, ինչ որ անգիրենը ժամանակակից աշխարհում: Այդ պատճառով էլ հասարակության մեջ մեծ հռչակ վայելող մարդկանց կոչել են արաբական անուններով, որպես յուրահասուկ արժանիքի տեր անձնագրությունների, դրանցից են օրինակ Զալալը, Դոլան և այլն:

¹ Մատենադարան, ձեռագիր N 378, թ. 308ա-308բ; Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Բարխուդարյան Ս., Երևան, 1982, էջ 40, 63:

² ՈՒԼուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 172-173:

³ Պատմությին Հայոց արարենալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցույ, էջ 254:

⁴ Գանձակեցի կ., Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1982, էջ 257-258:

⁵ Դեռ Վաալ Թ., Սև այգի, Հայաստանն ու Աղբենջանը խաղաղության և պատերազմի միջով, Երևան, 2007, էջ 220, 223:

⁶ Նոյն տեղում, էջ 225:

⁷ Նոյն տեղում, էջ 423:

⁸ Նոյն տեղում, էջ 226:

Հնում, ինչպես և այսօր, Արցախում ու նաև ամբողջ Հայաստանում, սովորության համաձայն, ավագ որդուն կոչել են պատի անունով: Տվյալ դեպքում հայր Վահագանզ-Տանգիկն ավագ որդուն՝ Հասան-Զալալ-Դոլային կոչել է իր հոր՝ Հասանի անունով: «Հասան»-ը արաքերեն բառ է, որ հայերեն նշանակում է «զնեղնգիկ տղամարդ»¹:

Խաչենի իշխան Հասանին անվանում էին նաև «Զալալ» և «Դոլա»: «Զալալ»-ը դարձյալ արարելին է և հայերեն նշանակում է «փառք, վնիկություն, մեծություն»²: «Դոլա»-ն էլ արարելին «դավիաթ-դովիաթ» բառից է և հայերեն նշանակում է «հարստություն, մեծություն, ինչք, պնտություն, իշխանություն»³:

Արզախահայությունն իր իշխանապետին՝ Ղասանին, մեծարելով, կոչել է «Զալալ-Դոլա», որ բառացի թարգմանաբար նշանակում է «փառք պետությանը», «փառք իշխանությանը»:

Սա բառացի թարգմանությամբ մոտավորապես նման է ռուսերեն «славо զарю» (փառք թագավորին) արտահայությանը, իսկ իմաստային թարգմանության պարագայում «Զալալ-Դոլա» արտահայտությունն, բայց ներևույթին, նշանակում է «պետության փառք», «պետության վեհություն»:

Հարկ է նշել, որ Հասանի նորայր Զարարեն էլ է ունեցել համանման անվանում, նա էլ կոչվել է «Նասր-Դոլա», ինչը թարգմանաբար հայերեն նշանակում է «օգնություն կամ հաղթություն պեսութան»⁴:

Ծառ կարծ ժամանակամիջոցում Հասան-Զալալ-Դոլան, շնորհիվ իր կառավարման, դիվանագիտական և զորավարական աստվածատոր տաղանդի, ձեռք է բերում զահենթեցի կարգավիճակ: Իր կառավարած զավատի՝ Ներքին Խաչենի իշխանության տարածքին միացնելով անիշխան մնացած Հաթենք զավատի տարածքը՝ Հասան-Զալալ-Դոլան դառնում է Արցախի արդեն երկճյուղ դարձած իշխանությունների (Սերքին Խաչենի և Վերին Խաչենի կամ Շարի) լիիրավ դեկավարք՝ վիմագիր արձանագրություններում և ձեռագիր մատյաններում կոչվելով Արցախի արքա, թագավոր⁵, կամ իշխանաց իշխան⁶:

Հասան-Զալալ-Դոլայի շինարարական գործունեության մասին պատմող առաջին արձանագրությունը պահպանվել է նրա տոհմին պատկանող Վաճառ զյուղատեղում, որի մասին վկայում են այժմյան Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ծմակահող զյուղի մոտ գտնվող հետքերը, որտեղ 1229թ. Հասան-Զալալ-Դոլան կառուցել է Սուրբ Ստեփանոս եկեղեցին⁷:

1248թ. Էլ Հասան-Զալալ-Դուլան ու իր կինը՝ Մամբանը, վերանորոգել են թաթար-մոնղոլների պանրած Անչառիսի վանրո⁸:

Սակայն զաշտութեալ գումարը կազմուի է Արքայի պահանջանաց իշխանի շինարարական գործունեության գլուխգործոցն և համարվում Գանձապարհ՝ Սուրբ Հրիփացնես Մերտքի անոնք կորո նկնդիգին, որի կարուում նա պետք է 1216թ.:

Գանձաւարի Ծոլքը մրկանասա Ծ զիշչի անուշը զիմլ պատացը, որը վանդայն և առ պատէ 1210թ.. Գանձաւարի Նկեղինցու կառուցման պատմությունը հանգամանորեն ննիրկայացրենի է XIII դարի արժանահավատ հայ պատմիչ Կիրակոս Գանձակեղին՝ միաժամանակ հաղորդվելով, որ Գանձաւարը ինում ենին է Ննիրին Խաչենի իշխանական տրիին լուսաւանաբրուն:

Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Զալայյանն այսպես է մեկնաբանում Գանձասար անունը. «Էզիդ փորբիկ առ համանոն լերամբն Գանձասարայ յորում է վանքն Գանձասար. արժանայիշտառակ հայր Ղոկասն Ինճիճեան ասէ թէ այն լեսառն կոչի Գանձասար այն է լեսառն Գանձակաց, իսկ նև հաւանական դատիմ զպատմութիւն բնակչացն, որք ասեն թէ յայսմ լերին գտանին հանքք արծաթոյ, վասնորոյ և կոչեցաւ Գանձասար, այն է լեսառն զանձուց, որք ի ստուգութիւն բանից իրենանց զուցին հնձ օտենիս լոռոց հանճառ են երեխն օաղծառ բազում»⁹:

Գանձակեցին ատում է «...յլով ամս աշխատ եղեն ի նման»¹⁰: Գանձասարի կառուցման մեջ արձանագրությունից հայտնի է ոսքնում, որ նկուղու կառուցումը տևել է 22 տարի՝ 1216-1238թթ.:

¹ Աճարյան Հ., Հայոց անձնաբունքների բարարակն. ի. Գ. Եղեկան. 1946. էջ 56:

² Արևին Խեցը կազմակերպություն է 1948 թ. 286:

³ Կույս լրիորդ հ. Բ. Եղիսակ 1944 էջ 76:

⁴ Ամսական, Խ. Բ., Յըման

⁵ Տարինեալ վարդապետ Խ., Արցախ, Երկասիրեց Մակար նպ. Բարխուտյառնեանց, «Արարատ», N 2, Էջմիածին, 1896. Էջ 81; ՈՒԽՈՎԱՐԱՆ Բ. Խաչենի հիշանություն X-XVI դարներում. Էջ 213:

⁶⁹ 1960, էջ 61; Իրվիլբայրական Բ., Խաչմար Խշամասիթյանը Ա-Ա ՎԻ լրաբանու, էջ 213.

⁷⁰ Դիման հայ վիմագրության, պրակ V, էջ 41; Մեծին Վարդանայ Բարձրբռնդեցոյ Պատմութիւն տիեզերական, էջ 200:

⁷ Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 79:

⁹ Ουνιακός Ομιλούμενος Συναρτησίου Η. Σχεδιαστική Επιτροπής, στις 15 Ιανουαρίου 1842, το

¹⁰ Պատմ-Զալալնանց Վարդապետ Ս., Ճանապարհորդութիւն ի Սովոն Հյայստան, սասն Ս, Տիկիսի, 1842, էջ 181-182:

¹⁰ Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակնցոյ, էջ 256:

Կարծում ենք՝ շինարարության երկար տևելու պատճառը օտարների պարբերական արշավանքներն են դնալի Արցախ։ Նախ XIII դարի 20-ական թվականներին Զալալ աղ-Դինի հորդաների արշավանքը, այնուհետև թաթար-մոնղոլների ավերիչ առաջին ասպատակությունները, որին էլ հաջորդեց երկրորդ արշավանքը։

Ժամանակի պատմիչները և հատկապես Կիրակոս Գանձակնցին իհացմունքով են նկարագրում եկեղեցու շինարարությունն ու նրա օժման արարողության մանրամասները։

Եկեղեցու օժման հանդիսավոր արարողությունից հետո, Հասան-Զալալ-Դուլան շքեղ ճաշկերոյթ է կազմակերպել։ Ինքն անձամբ իյուրասիրել և սպասարկել է մասնակիցներին, ապա յուրաքանչյուրին իր պատվի համեմատ առատաձեռն նվերներ հանձնելով, բոլորին ճանապարհել է։ Այս հանդիսավորությունը, համաձայն արժանահավատ պատմիչ Կիրակոս Գանձակնցու, տեղի է ունեցել 1240 թվականին՝ Վարդավառի մեծ տոնի օրը¹։

Պրոֆեսոր Բ. Ոհլուրաբյանը պարզել է, որ 1240թ. Վարդավառի մեծ տոնը տեղի է ունեցել հուլիսի 22-ին և համապատասխանել է շաբաթվա յոթերորդ՝ Կիրակի օրվան²։

Փաստորեն, համաձայն արժանահավատ պատմիչ Կիրակոս Գանձակնցու վկայության՝ 1240 թվականի Վարդավառի մեծ տոնի օրը առանձնահատուկ շքեղ է ներկա Խաչենագետի հովիտը։ Այդ օրը Արցախի կաթողիկոս Ներսեսն իր եպիսկոպոսներով ու հայոց աշխարհի ծայրերից ժամանած 700 քահանաներ պատրաստվում են օճկ Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտչի անվան տաճարը։

Օժման պաշտոնական արարողությունից հետո բացվել են իյուրասիրության սեղաններ։ Արցախի իշխանաց իշխան անձամբ սպասարկել է բոլոր իյուրերին։ Ավելին, հանդիսավոր խնջույքից հետո ոչ որ դատարկաձեռն չի ենուացել, Հասան-Զալալ-Դուլան բոլորին նվերներ է հանձնել՝ յուրաքանչյուրին իր դիրքին ու պատվին համապատասխան։

Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտչի եկեղեցու կառուցումն ավարտելուց հետո Հասան-Զալալ-Դուլան եկեղեցու պատերից մեկի վրա փորագրել է տվել մի բավականաչափ խոսուն արձանագրություն, որը վերաբերում է ինչպես եկեղեցու կառուցմանն, այնպես էլ Հասան-Զալալյանների իշխանական տաճան տոնի բարեկանությանը³։

Հասան-Զալալ-Դուլայի գահակալության սկզբում տեղի ունեցան թաթար-մոնղոլական մահավիյուր արշավանքները, որոնք չափազանց բացասական ազդեցություն ունեցան մասնակիրապես Արցախի ու ընդհանրապես ողջ Կովկասի քաղաքական զարգացման ընթացքի վրա։

Ժամանակի արժանահավատ պատմիչ Կիրակոս Գանձակնցին այսպես է նկարագրել թաթար-մոնղոլների հանկարծակի ներխուժումն Անդրկովկաս։ «Ի Ոկտ (1220) թուականին...թաթար-մոնղոլները – Ա. Հ-Զ.) յանկարծակի յեղակարծ ժամու յոլով գունդս զօրու ծանու ամենայն կազմութեամբ ելեալ ընդ դուռն Դարբանդայ ուժգին դիմեցմամբ, և ելեալ յաշխարհն Աղուանից, զալ անցանել յաշխարհ Հայոց և Վրաց, և զոր ինչ զտանէր ի ճանապարհին՝ զամեննենան սրոյ ճարակ տայր՝ զմարդ և զանասուն, մինչև ի շունս անզամ, և մեծագին հանդերձից և այլ ընչից փոյթ ինչ ոչ առնեին, բաց ի ձիոյ. և փոյթ ընդ փոյթ չողան մինչև ի քաղաքն Տիլիսի, և դարձեալ եկին իշխն յաշխարհն Աղուանից, ի սահմանս Շամբոր քաղաքիս...»⁴։

Սա թաթար-մոնղոլների առաջին արշավանքն էր Անդրկովկաս և հարևան երկրներ, որով նրանք կատարել են ինտուալուգություն։ «...1223 թվին, մոտ երեք տարվա արշավանքներից հետո, սրանք (թաթար-մոնղոլները – Ա. Հ-Զ.) վերադարձան Արևելք՝ Զինգիկ-խանի մոտ, հավաքած լինելով կարևոր տեղեկություններ արևմտյան այն երկրների մասին, որ իրենք նվաճելու էն մոտ ապագայում»⁵ - միանգամայն իրավացիորեն գրել է ակադեմիկոս Հակոբ Մանանյանը։

Մոնղոլիայի մայրաքաղաք Կարակորումում, որը գտնվում էր Օրխուն գետի վրա⁶, 1235թ. թաթար-մոնղոլական ռազմարարական բարձրագույն ժողովը՝ կուրուլթայը, որոշում ընդունեց նոր արշավանքներ սկսել՝ նպատակ ունենալով մոնղոլական տիրապետությունը տարածել նաև Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Անդրկովկասի դեռևս չնվաճված երկրների վրա⁷։

Եվ ահա 1236թ. կուրուլթայում ընդունված որոշումն իրագործելու մտադրությամբ արշավանքներ են ձեռնարկվում մի կողմից դեպի Ռուսաստան Զինգիկ խանի մեծ որդի՝ Չուչիի որդի Բաթու խանի գլխավորությամբ, մյուս կողմից դեպի Անդրկովկաս Զարմադանի գլխավորությամբ⁸։

¹ Նույն տեղում, էջ 256։

² Ոհլուրաբյան Բ., Խաչենի իշխանություն X-XVI դարերում, էջ 177։

³ Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 38-40; Բարխուտարենաց եպիսկոպոս U., նշվ. աշխ., էջ 250-251։

⁴ Պատմութիւն Հայոց Կիրակոսի քարդապետի Գանձակնցու, էջ 190։

⁵ Մանանյան Հ., նշվ. աշխ., էջ 196։

⁶ Գանձակնցի Կ., Հայոց պատմություն, էջ 317։

⁷ Մանանյան Հ., նշվ. աշխ., էջ 210; Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 606։

⁸ Մանանյան Հ., նշվ. աշխ., էջ 210-211; Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 606։

Արցախ-Խաչենը բաժին էր ընկել Զուդրուդա զորավարին¹, որն, ըստ Միքայել Չամչյանի, թաթար-մոնղոլական զորքերի զլաւակոր հրամանատար Չարմաղանի նորայրն էր²:

Ի վերջո, թաթար-մոնղոլները հասնում են Արցախի սահմաններին: Նրանց թվում էր, թե Արցախը ևս կարող են անարգել նվաճել, ինչպես մինչ այդ նվաճել էին Հայաստանի մյուս նահանգները: Սակայն նրանք, չարաչար, սկսակում էին: Արցախում իր զորքերով նրանց ընդառաջ նևակ մեծ հայրենասեր ու քաջ զորավար, իշխանաց իշխան Հասան-Զալալ-Դոլան՝ իր հայրենիքին ու ժողովրդին տեր կանգնելու ամուր վճռականությամբ:

Այս հետատես իշխանաց իշխանն իր նրկրի բնակիչներին նախապես կենտրոնացրել էր երկու անառիկ բերդերում՝ Կաչաղակաբերդում³ (Կավրախաղացում)^{*} ու Խոխանաքերդում^{**}: Հասան-Զալալ-Զալալ-Դոլան իր զորքով մարտի է բռնվում թաթար-մոնղոլների հետ: Երկարատև ճակատամարտի արդյունքում, սակայն, արնածարաւ կողոպտիչները մեծ դժվարությամբ կարողանում են նվաճել Կաչաղակաբերդը: Նրանք գաղտագործ թափանցում են բերդն ու սրի քաշում ներսում գտնվող բազմությանը, իսկ մի մասին էլ գահավետ անում: «...ի բազմութենէ անկելոցն ծածկեր երկիրն և արհինն առու եղեալ՝ իբրև զօնոր երթայր, և յոշ որ խնայեցին և ուկերքն յետ բազում ժամանակաց իբրև զբերդուկս քարանց կուտակեալ երևէին»⁴ - զրել է ականատես, պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Երկու կողմերն էլ ունենում են մեծ թվով կորուստներ:

Սռաջին ամրոցը նվաճելուց հետո թաթար-մոնղոլները շարժվում են դեպի նրկրորդ ամրոց՝ Խոխանաքերդը: Այստեղ ևս Հասան-Զալալ-Դոլան ճակատամարտի մեջ է մտնում նրանց հետ: Երկարատև, կատաղի պայքարից հետո, տեսնելով, որ անհնար է զրավել այս բերդը՝ թաթար-

¹ Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 217:

² Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 210:

³ Սարգսյան Ս., Կաչաղակաբերդ, Լրաբեր հասարակական գիտություններին, Ն 1, Երևան, 1990, էջ 45:

*Գտնվում է Խաչեն գետից հարավ՝ Թողատակ և Բադրա գյուղերի արանքում՝ մի բարձր և անմատչելի ժայռի վրա, (տե՛ս ՈՒլուրաքյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 136): Ամրոցի Կաչաղակաբերդ անվանումը կապվում է այն ավանդության հետ, թե անցյալում պարտություն չտևած և համառ դիմադրությամբ հոչակված ամրոցի պաշտպանները, երկար ժամանակ ջուր և սննդամթերք չունենալով, նահատակվում են, բայց չեն հանձնվում թշնամուն: Խոկ երբ կաչաղակեներն ու մյուս զիշտի թշունները սկսում են աղմուկ-աղաղակով պատույտներ զործել ամրոցի վրա, թշնամին կրահում է, որ պաշտպանները կենդանի չեն: Ահա այսպես առաջացնել է ամրոցի կաչաղակաբերդ կամ Հավրախաղաց անվանումը: Պատմական տարբեր ժամանակահատվածներում ամրոցն ունեցել է տարբեր անվանումներ. մինչև X դարը այն կոչվել է Խաչենի բերդ, XIII դարում ամրոցը հիմնականում հայտնի է եղել Սխասան Հավրախաղաց անունով, իսկ ականած XV դարից այն կոչվել է կաչաղակաբերդ, (տե՛ս Սարգսյան Ս., նշվ. աշխ., էջ 41):

**Բերդը պարսկերեն կոչվում է Խոխանաքերդ – հայերեն թարգմանաբար նշանակում է Իշխանաքերդ, (տե՛ս Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, էջ 317): Գտնվում է Գանձասարի նեղենցուց հարավ՝ Խաչեն գետի աջ ափին՝ ծովի մակերևույթից 1739-1812 մ. բարձրությամբ լեռան վրա՝ այժմյան Մարտսկերտի շրջանի Վանք գյուղից 3 կմ. հարավ-արևմուտք: Կոչվում է նաև Թարխանաքերդ, քանի որ գտնվում է Թարխանասար կոչվող լեռան վրա, (տե՛ս Մկրտչյան Ռ., Իստորիկո-արհետուրիալ պատմական հայոց պատմություններ, Երևան, 1989, էջ 21): Ունի ավելի քան 2700 տարվա գրավոր հիշատակություն, (տե՛ս Կարագեզեան Յ., Հայկական լեռնաշխարհ սեպազիր աղբիւրներում, հ. I, գ. 1, Երևան, «Մազմայա», 1998, էջ 139): Ամրոցից փոքր-ինչ հյուսիսի գտնվում են Դարպասներ կոչվող իշխանական ապարանքի ավերակները, (տե՛ս Հասան-Զալալ-Դոլան վարդապետ Ս., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ս, Տիֆլիս, 1842, էջ 24; Մկրտչյան Ռ., սու. ս. 21): Միջնադարում Հայաստանում իշխանական ապարանքները կոչվել են «դարաբա», «դարապա», (Նոր բառզիր Հայկազնան լեզուի, հասոր առաջին, Երևան, 1979, էջ 603-604), կամ «դարբա», «դարպա», (Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 151): Գրականության մեջ Խաչենի իշխանական ապարանք՝ «Դարպասներ»-ը, կոչվում է նաև Ռուզանի բերդ: Հատ ավանդության այն պատկանել է Հասան-Զալալ-Դոլայի դուստր Ռուզանին՝ ծառայելով նրա համար որպես ամառային պալատ: Պահպանվել են ապարանքի պարսպի մեծ մասի հիմքերը կիսակործան անկյունային բուրգերով ու դարպատվ, երկու սենյակի պատերն ու ծածկի որոշ մասն, ինչպես նաև մի քանի այլ սենյակների մնացորդներ: Ապարանքը շինարարական կամ այլ արձանագրություն չունի: Տեղագրական երկներում այն Դարպասներ անվան տակ էլ ներկայացվում է որպես Խաչենի XIII դարի նշանագրը իշխանաց հայտն Հասան-Զալալ-Դոլայի պարանք, (Պուլյան Ա., Խաչենի իշխանական ապարանքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, Երևան, 1984, էջ 51): Իշխանական ապարանքի ավերակներից մի քանի մեծուր հենուափորթյան վրա՝ կողը կողքի, կառուցված են երկու միջին չափերի բազիլիկ նեղենցիներ, (Մկրտչյան Ռ., սու. ս. Հայաստանի և հարավից շրջանների տնիքներուների բառարան, հ. II, Երևան, 1988, էջ 765): Հարկ է նշել, որ Խոխանաքերդն առ այսօր չի նենթարկվել սպառիչ հնագիտական ուսումնասիրության:

⁴ Պատմություն Հայոց արարենալ կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 253:

մոնղոլները, դիմում են Արցախի իշխանաց իշխանին՝ առաջարկելով խաղաղություն: Հասան-Զալալ-Դուլան մեծ նվերներով իջնում է իր բնորդից և հաշտություն կնքում Արցախը նվաճելու հրաման ստացած Չուղբուղա զորավարի հետ: Մոնղոլները «...մեծարան արարեալ նմա (Արցախի իշխանաց իշխանին – Ս. Հ-Զ.), տան զաշխարհն իւր ի ձեռու նորա այլ ևս յանդուածով...»¹:

Ինչպես տեսնում ենք, իր քաջության և իմաստուն քաղաքականության շնորհիվ Հասան-Զալալ-Դուլան կարողացել է ոչ միայն ապահովել Արցախի անվտանգությունն, այլև մեծացնել նրա սահմանները՝ թաթար-մոնղոլներից ստանալով նոր հողեր ու տարածքներ:

Դեպի Արցախ թաթար-մոնղոլների արշավանքը տեղի է ունեցել մոտավորապես 1238-1239թթ., թերևս հենց 1239թ., քանզի, ըստ նրեւոյթին, հենց այս արշավանքի պատճառով է, որ Արցախի իշխանաց իշխանը, 1238թ. ավարտելով Գանձասարի Եկեղեցու կառուցումը, ստիպված է նղել օժման հանդիսավոր արարողությունը կատարել երկու տարի անց՝ 1240թ.:

Ամենայն հավանականությամբ հենց այս արշավանքի ժամանակ էլ Հասան-Զալալ-Դուլան ստիպված է լինում թաթար-մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար Զարմաղանի որդուն՝ Բորա նուինին*, կուության տալու իր դատերը՝ զեղողկուի Ուուզարանին (Ուուզարանին)***, որի շնորհիվ, ըստ նրեւոյթին, թաթար-մոնղոլներն ավելի մեղմ քաղաքականություն են սկսում վարել Հասան-Զալալ-Դուլայի ու Արցախի նկատմամբ:

1242թ. սկզբներին թաթար-մոնղոլների մեծ խանից հրաման ստացվեց թաթար-մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար, համրացած Զարմաղանի² փոխարեն նոր հրամանատար ընտրելու մասին: Ընտրության արդյունքում նոր զորավար և առաջնորդ ընտրվեց Բաչու-Ղուրշին³, սակայն իշխանությունը պետք է վարել Զարմաղանի կինը՝ Ելթինա խաթունը⁴:

Նոր զորահրամանատար Բաչու-Ղուրշին Արևմտյան Հայաստանը սեղուկներից նվաճելու համար հայկական զորագնդերից բանակ է կազմում, որի մեջ ընդգրկում է նաև Հասան-Զալալ-Դուլային, վերջինիս քերիներ Իվանեցի ու Զարարենի որդիներին՝ Ավազին և Շահնշահին իրենց զորագնդերով:

Արևմտյան Հայաստանն ու Արևնելյան Վրաստանը նվաճելուց հետո մոնղոլները ցանկանում էին իրենց իշխանությանը նեփարկել նաև Իկնիայի Սելջուկյան պետությունը:

Պարտության մատնելով սեղուկներին՝ Բաչու-Ղուրշին որոշում է շարունակել հայթական նրբն ու ծմկի բներել նաև սեղուկների առաջնորդ Ղիյաս-Էղդին քայ Խոսրով II-ի (1237-1247թթ.) դաշնակիցներին, մասնավորապես՝ Հայկական Կիլիկիայի թագավոր Հեթում I-ին:

Սակայն Արցախի իշխանաց իշխան Հասան-Զալալ-Դուլայի դիվանագիտական միջնորդության շնորհիվ Հայկական Կիլիկիայի թագավոր Հեթում I-ի (1226-1270թթ.) ու թաթար-մոնղոլների միջև կնքվում է դաշինք, ինչի արդյունքում Կիլիկիան փրկվում է վերահաս կործանումից:

Հեթում արքան, տեղեկանալով իր դաշնակցի՝ Ղիյաս-Էղդինի պարտության մասին, որպես հետատես միավետ, որոշում է մի պատգամավորություն ուղարկել թաթար-մոնղոլական բարձրագույն ռազմադարական դեկավարության մոտ՝ առաջարկելով կնքել խաղաղության և բարեկամության մասին դաշնագիր⁵:

Շատ լավ իմանալով, որ ժամանակի հայ քաղաքական իրականության մեջ եթե կար մեկն, ով մեծ հարգանք ու պատիվ էր վայելում թաթար-մոնղոլական բարձրագույն դեկավարների շրջանում, ով օժտված էր իմուտ դիվանագիտական կարողությամբ՝ պետք է ներթադրել, որ Հեթում արքան մի դեսպանություն էլ ուղարկել էր Արցախի իշխանաց իշխանի մոտ՝ խնդրելով նրա միջնորդությունը թաթար-մոնղոլական բարձրաստիճան աշխորհյաների հետ հանդիպելու և բանակցելու համար:

Լինելով հետատես պետական զործիչ ու հմուտ դիվանագետ՝ Հասան-Զալալ-Դուլայն, բնականաբար, հանձն է առնում իրականացնել խիստ կարևոր, ազգային նշանակություն ունեցող

¹ Նույն տեղում, էջ 255:

* Թաթար-մոնղոլ. - հայերեն նշանակում է պարոն, (տե՛ս Գանձակեցի Ա., Հայոց պատմություն, էջ 197):

** Այս ամուսնության վերաբերյալ Մուրազանը 1881թ. գրել է պատմական դրամա, որը հրատարակվել է 1900թ. «Թատրոն» հանդեսում, (տե՛ս Մուրազան, Ուուզան կամ հայրենասեր օրիորդ, Երևան, 1944):

² Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 263:

³ Նույն տեղում, էջ 263-264:

⁴ Նույն տեղում, էջ 274: «Խաթուն»-ը մահմեդական ծագում ունեցող բառ է, որը հայերեն նշանակում է «կին», «պատվակոր կին», «տիկին», «լսանըմ», (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրբների մասին, հ. Ա., Երևան, 1961, էջ 362):

⁵ Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 269:

առաքնալությունը: Եվ 1243թ. Կեսարիայում¹, որը համապատասխանում է այժմյան Թյուրքիայի կայսրի քաղաքին^{***} Արցախի հշխանաց իշխանը կիլիկյան հայոց թագավորական առաջին պատվիրակությանը ներկայացնում է թաթար-մոնղոլական զորքների զլասավոր հրամանատար Բաշու նուինին, նաև կին հրամանատար Զարմաղանի կնոջը՝ Ելթինա Խաղթունին^{*} ու մոնղոլ մյուս մեծամեծներին²:

Հայկական պատվիրակության կազմում էին կիլիկյան հայոց զորքների զլասավոր հրամանատար Սմբատ Սպարապետը (գունդստաբլը՝ 1208-1276թթ.), ով, ի դեպ, Հնեում I արքայի ավագ նորբայրն էր³, վարդապետ Սիմոն Ասորին և Հնեում արքայի հայրը՝ կոստանդին⁴ պայլը^{**}, ով զլասավորում էր պատվիրակությունը⁵:

Հասան-Զալալ-Դոլայի անմիջական միջնորդությամբ տեղի ունեցած հայ-մոնղոլական բարձր մակարդակի բանակցությունների արդյունքում կնքփում է մի պայմանագիր, ըստ որի կիլիկյան հայոց թագավորությունը ճանաչում էր իր կախվածությունը մոնղոլական կայսրությունից, միաժամանակ պարտավորփում էր հարկ նորած դեպքում պարենամթենք մատակարարել մոնղոլական զորքներին, իսկ անհրաժեշտության դեպքում տրամադրել նաև հայկական օժանդակ զորքեր:

Մոնղոլներն էլ, ընդունելով Հնեում I-ի ընծաները, հաստատեցին բարեկամություն արքայի հետ՝ տալով նաև այդ ամենը հաստատող գիր՝ ըստ իրենց հավատի, որն «Էլ-տամհան»^{***} էին կոչում⁶:

Նկատի ունենալով Հասան-Զալալ-Դոլայի միջնորդական խիստ կարևոր առաքնալությունը՝ կարող ենք տանը, որ Արցախի հշխանաց իշխանը զգալի կշիռ և հեղինակություն է ունեցել ժամանակի միջազգային քաղաքականության մեջ:

Հասան-Զալալ-Դոլայի բարեկամությունը թաթար-մոնղոլական կայսրության առաջին դեմքների հետ, հմուտ քաղաքականություն վարելու կարողությունը, ինչպես նաև անելանելի թվացող իրավիճակներում արագ ու արդյունավետ լուծումներ զտնելու ունակությունը, կարծեք թե, պետք է հնարավորություն տային Արցախի հշխանաց իշխանին հանգիստ ու խաղաղ հշխանավարման:

Սակայն, զավոր սրտի, հետագա դեմքներն ու իրադարձությունները ծավալվեցին ի վնաս Հասան-Զալալ-Դոլայի, ինչի արդյունքում էլ տարածաշրջանի մոնղոլ հարկահան Արդունի հրամանով 1261թ. իշխանաց իշխանը ձերքակալվում է և տարփում Իրանի Ղազվին քաղաքը, ապա կարճ ժամանակ անց ենթարկվում է մահապատժի⁷:

Հասան-Զալալ-Դոլայի նահատակությունը, Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու արժանահավատ վկայություններով, տեղի է ունեցել 1261թ.⁸:

Հասան-Զալալ-Դոլայի որդին՝ Աթաքեկ-Իվանեն, «...առաքնաց...արս հաւատարիմս և նո գողանաւ զնշնարիս հօր իրոյ, զի ընկեցնաւ կայր ի ջրհոր մի զամաք, զի Պարսիկն որ ի տան իրում ունէր զնա (Հասան-Զալալ-Դոլայի – Ս. Հ-Զ.) ի կապանս, տեսնաւ աստուածայինս ի վերայ նորա, զի իբրև սպան զնա, իջեալ լոյս սաստիկ ի վերայ, խնամարկեալ ընկեց զնա ի ջրհորն, զի յետ աւուրց թաղեցէ զնա պատուով: Նա եցոյց խնդրողացն զմարմինն նորա, և պատմեաց զաքանչելի տարան զնա (Հասան-Զալալ-Դոլայի մարմինը – Ս. Հ-Զ.) ի տուն ժողովնալ խնդրութենամբ, և բարձեալ տարան

¹Գալստյան Ա., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, «Պատմաբանափիրական հանդիս», N 1, Երևան, 1964, էջ 99:

^{***}Քաղաք Կապարովվիայում, այժմյան Թյուրքիայի կայսերի վիլայեթի վարչական կենտրոնը, (տե՛ս Հայկական համառոտ հանրագիտարան, h. 2, Երևան, 1995, էջ 664):

²Ելթինա խաղթունը քրիստոնյա էր, մինչև Զարմաղանի կինը դառնալը Զինգիզ խանի կինն էր նորի, (տե՛ս Օրելի Ի., հԱսան-Ջալալ, հԿՅ Խաչենսկի, c. 422).

³Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցու, էջ 269:

⁴Գանձակեցի կ., Հայոց պատմություն, էջ 140, 199:

⁵Նոյն տեղում, էջ 140: Մինչև իր մահը Սմբատ սպարապետը նորի է Հնեում I արքայի զահակիցն ու իմաստուն խորհրդականը, (տե՛ս Հայկական սովորական հանրագիտարան, h. V, Երևան, 1979, էջ 612):

⁶Պայլ – պարոնի կամ ասպետի փոխանորդ, (տե՛ս Աճաղյան Հ., Հայերեն արմատական բառարան, h. IV, Երևան, 1979, էջ 17):

⁷Գալստյան Ա., նշվ. աշխ., էջ 98:

⁸Էլ-տամհա – արտոնագիր, պետությունից տրված արտոնաթուղթ, (տե՛ս Գանձակեցի կ., Հայոց պատմություն, էջ 208):

⁹Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցու, էջ 270:

⁷Նոյն տեղում, էջ 375:

⁸Պատմութիւն Հայոց արարեալ կիրակոսի վարդապետի Գանձակեցու, էջ 375; Մեծին Վարդանայ Բարձրբերդեցու Պատմութիւն տիեզերական, էջ 200:

զնա ի տուն իր, և թաղեցին ի վաճքն Գանձասար ի գերեզմանս հարց իրոց: Այլ և բնրողը նշխարացն տեսին ի ճանապարհի զնոյն տեսիլ լուսոյն ի վերալ նշխարազն»¹:

Թեև Կիրակոս Գանձակեցին գրել է, որ Հասան-Զալալ-Դուլայի մասունքները «...թաղեցին ի վանքն Գանձասար ի գերեզմանս հարց իրոց», այնուամենայնիվ, մինչ օրս հայտնի չէ Արցախի իշխանաց իշխանի գերեզմանի գտնվելու ստույգ տեղը:

Ինչո՞ւ այսօր Գանձասարի եկեղեցու գավթում ի շարս բազում տապանաքարերի չկա մի տապանաքար, որի արձանագրությունն ընթերցնելով հնարավոր լինի հստակ ասել, որ ահա սա է Արքալիի իշխանաց իշխան Հասան-Զալյալ-Դոլյայի զերեզմանը:

Զափազանց դժվար է հավատալ, թե Աթաբեկը հոր գերեզմանի վրա տապանաքար չի դրել մասունքներ ամփոփելու հետո: Այս դեպքում որտե՞ղ է հշխանագ հշխանի գերեզման:

Գայնձասարի նկնդցու զավթի արևելյան մատում՝ դեպքի նկնդցին տառն մուտքի առջև գտնվող տապանարարը, որը զանձ որդնողների կողմից երեք մասի է բաժանվել, այնուհետև կրկին դրվել խառնված գերեզմանի վրա, բազում թյուրիմացույցների տեղիք է տալիս թե՛ք այցելուներին, թե նկնդցում ծառայող հոգևորականներին, ովքեր սխալմամբ Հասան-Զալալ-Դոլայի թոռանթո՞՛ Զալալ Մեծի տապանարար նույնազնում են Հասան-Զալալ-Դոլայի տապանարարի հետ:

Հիշյալ տապանաքարի արձանագույն և համար լավագույն կարենի տեսակաքարի համ:

«ԱՅ[Ո Է] ՔԱՆԳ[ԻՒ]Տ ՄԵԾԻՆ
Զ[ԱԼ]ԱԼԻ[Ն] ԱՂԱԽԹՈՒ
ՅԻ[Շ]ԵՑՔ ԹՎ[ԻՆ] :ՊՊ: (1431)»³:

Մինչեն Հասան-Զալալ-Դոլան նահատակվել է 1261թ.՝ տապանաքարի վրա նշված թվականից 170 տարի առաջ:

Մակար Բարիկուտարյանցն այս արձանագրության մասին զբել է. «Հարկ է յայտնել, որ ականաւոր իշխանս Զալալ-Դոլայ նահատակուած է ԶԺ (1261) թուին, իսկ սորու զերեզմանի շիրմաքարն կրում է Հայոց ՊԶ (1431) թիվը: Յայտնի է, թէ («Այս է հանգիստ մեծին Զալալին. յաղաթօս յիշեցեք թվ. ՊԶ (1431)») տապանաքարս կամ նահատակութիւնից 170 տարի յետոյ ձգուած է եւ կամ փոխսուած է իին տապանաքարս եւ ձգուած նորս եւ կամ այլ է Զալալ-Դոլայի եւ այլ Զալալի զերեզմաններն, բայց տապանաքարս միայն մի հատ է»⁴:

Դժվար է հավատալ Բարխուտարյանցի ենթադրություններին, քանի նաև չեղ կարող պատահել, որ Աթաբեկը հոր գերեզմանի վրա տապանաքար չդներ մասունքներն ամփոփելուց անմիջապես հետո, այլ թողներ, որ այն դրվելը հուղարկավորությունից 170 տարի հետո միայն:

Երկրորդ, նիւթ ընդունում ենք, որ Աշաբենկը հոր զերեզմանի վրա տապանաքար է դրել մասունքներն ամփոփելուց անմիջապես հետո, ապա պետք է ենթադրել, որ նա տապանաքարի վրա փորագրել է տվյալ նահատակվածի, այսինքն՝ իր հոր, լրիվ կամ մասնակի անունը, այն է՝ «Հասան-Զալալ-Դոլա» կամ «Հասան-Զալալ»՝ միննույն ժամանակ արձանագրելով նաև նահատակության թվական՝ 1261:

Եվ եթեն հետագայում Հասան-Զալալյան տոհմի ժառանգներն իրենց նախապատի գերեզմանի վրայի ժամանակի ընթացքում մաշված, իին տապանարարը փոխել են և դրեն նորը, ապա ճիշտ է ենթադրել, որ նրանք անխախտ կթողնեին տապանարարի վրայի գիրը՝ մասնավորապես նահատակվածի անունն ու նահատակության տարեթիվը, ընդհամենն արձանագրելով փոփոխության թվականը, այլ ոչ թե Հասան-Զալալ-Դոլյայի անվան ու նահատակության տարեթիվի (1261թ.) փոխարեն կփորագրեին Զալալ Մեծի անունն ու վերջինիս վախճանի թվականը (1431թ.):

Եվ վերջապես նրբորդ, անտրամաբանական է ննթադրել, որ Հասան-Զալալ-Նոլայի և Զալալ Մեծի զերեզմանների վրա մեկ տապանաքար են դրել, քանզի հիշյալ անձինք ոչ թե ուսմիկներ են եղել, այլ ազնվականներ և այս առումով կարենի է մեծ հավանականությամբ ենթադրել, որ նրանց պատվով են հուղարկավորել՝ յուրաքանչյուրի զերեզմանին դնելով առանձին տապանուրուր:

Սնում է կարծել, որ Աթաքեն, անտարակոյս, տապանաքար է դրել հոր զերեզմանի վրա, որի ճշգրիտ տեսը, սակայն, դժբախտաբար, մինչ օրս, դեռևս, հայտնի չէ:

¹ Πατιμοιθινός Καյηδ αριθμού Λιβρακού ή Φαρναψίνης Φανδακήνει, έως 375-376:

² ՈՒՂՈՔԱՐՅԱՆ Բ., ԽԱՅԵՆԻ ԽՀԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԻ ՏԻՎ Խ-ԽVI դարերում, էջ 208, 305:

³ Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 64:

⁴ Բարխուտարեանց Եպիսկոպոս Մ., նշվ. աշխ., էջ 252, 375:

Այսպիսով, Արցախի Առանշահիկների թագավորական տոհմի ժառանգ Հասան-Զալալ-Դոլան 47 տարի անընդմեջ՝ 1214-1261թթ., հանդիսացնել է Արցախի թագավորը կամ իշխանաց իշխանը, կամ իր խոսքով ասած՝ «Բնակատը (բնիկ – Ս. Ռ-Ջ.) ինքնակալ (ինքնիշխան – Ս. Ռ-Ջ.) բարձր և մեծ Արցախական աշխարհի, թագաւոր Խալիսանաբերդի, յորնասահման (բազմասահման – Ս. Ռ-Ջ.) նահանգալք»¹:

XIII դարի հայ քաղաքական իրականության մեջ Հասան-Զալալ-Դոլան ամենանշանավոր պետական, ուսումնական ու քաղաքական գործիչներից մեկն էր: Նրա քաղաքական-դիվանագիտական գործունեությունը Հայաստանի միջնադարյան պատմության մեջ նշակալի ներկայություն էր: Նա փաստացի (դե-ֆակտո) և իրավաբանորեն (դե-յուրի) ներկայացնել և օտարների կողմից ճանաչվել է որպես անկախ, ինքնիշխան պետության ղեկավար:

Տնդեկություններ հետինակի մասին.

Ստեփան Հասան-Զալալյան - ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ

ՀՀ Ազգային ժողովի փորձագետ

E-mail: Hasan-Jalal@yandex.ru

Հոդվածը տպագրության է նրաշխավորեն խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

¹ Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 38-39: